ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2018թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի հ.87-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Զ.Անդրանիկի փողոցի հ.40/3 հասցեում գտնվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26032018-01-0169 վկայական)՝ 287.92քմ մակերեսով շինությունը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 337.28քմ մակերեսով հողամասը նվիրաբերել «Հայաստանի Հանրապետության հաշմանդամային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված մարզասրահ հիմնելու նպատակով:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել սույն որոշման առաջին կետում նշված նվիրաբերության մասին պայմանագրի կնքումը կազմակերպության հետ՝ դրանում սահմանելով, որ կազմակերպությունը պարտավորվում է.

1) Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվող պահանջներին և պայմաններին համապատասխան սահմանված կարգով վերակառուցել շինությունը որպես մարզասրահ.

2) ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի մշակումը և շինարարական աշխատանքները սկսել նվիրաբերումից հետո, մեկ տարվա ընթացքում.

3) շինարարությունը սկսելու պահից 2 (երկու) տարվա ընթացքում ամբողջությամբ ավարտել աշխատանքները, այդ թվում՝ հիմնանորոգումը և ներքին հարդարումը.

4) ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի և մարզասրահի ծառայություններից օգտվելու համար հարմարավետ պայմանների ստեղծումը.

5) ապահովել մարզասրահը հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործելու համար հարմարեցված սպորտային սարքավորումներով կահավորումը.

6) բոլոր աշխատանքներն իրականացնելու համար կազմակերպության և (կամ) դոնոր կազմակերպությունների միջոցով ապահովել առնվազն 80մլն (ութսուն միլիոն) ՀՀ դրամին համարժեք աշխատանքների իրականացումը և գույքի ձեռքբերումը.

7) շինարարական աշխատանքները սկսելու պահից հետո ներկայացնել եռամսյակային հաշվետվություն կատարվող աշխատանքների վերաբերյալ.

8) օգտագործել գույքը բացառապես նվիրաբերության պայմանագիր կնքելու պահին կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների և խնդիրների իրականացման համար և առնվազն 10 տարի գույքը օգտագործել առաջնային որպես հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզասրահ:

9) մարզասրահից օգտվող Հայաստանի և Արցախի սահմանների անվտանգությունն ապահովելու և (կամ) զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար տրամադրվող բոլոր ծառայություններն իրականացնել անվճար հիմունքներով:

10) Առանց Երևան համայնքի համաձայնության չօտարել կամ գրավ չդնել նվիրաբերությամբ տրամադրվող գույքը՝ սույն որոշման 2-րդ կետի 8-րդ ենթակետում նշված ժամկետում:

3. Նվիրաբերության մասին պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են կատարման կազմակերպության միջոցների հաշվին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Զ. Անդրանիկի փողոցի հ.40/3 հասցեում գտնվող 287.92քմ մակերեսով շինությունը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 337.28քմ մակերեսով հողամասը նվիրաբերել «Հայաստանի Հանրապետության հաշմանդամային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված մարզասրահ օգտագործելու նպատակով:

Համաձայն կանոնադրության՝ կազմակերպության գործունեության նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սպորտաձևերի զարգացումը, մարզվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, մարզամշակութային միջոցառումների անցկացումը, հաշմանդամություն ունեցող հայ մարզիկների միջազգային մրցաշարերին մասնակցության ապահովումը, նշված խմբի անձանց իրավունքների, շահերի պաշտպանությունը, ինչպես նաև սեմինարների, կոնֆերանսների, փորձի փոխանակման կազմակերպումն ու անցկացումը:

Քննարկվող տարածքը նախատեսվում է վերակառուցել և օգտագործել որպես մարզասրահ Հայաստանի և Արցախի սահմանների անվտանգությունը ապահովելու և (կամ) զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած, ինչպես նաև քաղաքացիական հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Զ. Անդրանիկի փողոցի հ.40/3 հասցեում գտնվող 287.92 քմ մակերեսով շինության և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 337.28քմ մակերեսով հողամասի նվիրաբերության պայմանագրում նախատեսվում է ամրագրել դրույթ՝ համաձայն որի կազմակերպությունը պարտավորվում է Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացվող պահանջներին և պայմաններին համապատասխան սահմանված կարգով վերակառուցել շինությունը որպես մարզասրահ, ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի մշակումը և շինարարական աշխատանքներն սկսել նվիրաբերումից հետո մեկ տարվա ընթացքում, շինարարական աշխատանքներն սկսելու պահից 2 (երկու) տարվա ընթացքում ամբողջությամբ ավարտել աշխատանքները, այդ թվում՝ հիմնանորոգումը և ներքին հարդարումը, ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի և մարզասրահի ծառայություններից օգտվելու համար հարմարավետ պայմանների ստեղծումը, մարզասրահը հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործելու համար հարմարեցված սպորտային սարքավորումներով կահավորումը, բոլոր աշխատանքներն իրականացնելու համար կազմակերպության և (կամ) դոնոր կազմակերպությունների միջոցով առնվազն 80մլն. (ութսուն միլիոն) ՀՀ դրամին համարժեք աշխատանքների իրականացումը և գույքի ձեռքբերումը, ինչպես նաև ներկայացնել շինարարական աշխատանքները սկսելու պահից

եռամսյակային հաշվետվություն կատարվող աշխատանքների վերաբերյալ, օգտագործել գույքը բացառապես նվիրաբերության պայմանագիր կնքելու պահին կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների և խնդիրների իրականացման համար, մարզասրահից օգտվող Հայաստանի և Արցախի սահմանների անվտանգությունն ապահովելու և (կամ) զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար տրամադրվող բոլոր ծառայություններն իրականացնել անվճար հիմունքներով:

Հաշվի առնելով կազմակերպության գործունեության ուղղվածությունը և նպատակները, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2018 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.87-Ն որոշմամբ նպատակահարմար է գտնվել բավարարել կազմակերպության խնդրանքը, ինչի համար մշակվել է Երևանի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք նվիրաբերելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույք նվիրաբերելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ